ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2018 թվականի N 35

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Արման Սերգեյի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող 024-017 կադաստրային ծածկագրի 0.089 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (վկայական N 1219208) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 6 փողոց N 8 հասցեն
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. ապրիլի 17

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2018 թվականի N 36

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով և համայնքի ավագանու՝ 2018 թվականի ապրիլի 09-ի N 17 որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի բյուջեի 8.4.3՝ կրոնական և հասարակական այլ ծառայություններ ծրագրից 600.0 /վեց հարյուր հազար/ դրամ հատկացնել ԱՁ Գագիկ Մխիթարյանին՝ 10 տ ցեմենտ ձեռք բերելու և Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքում կառուցվող Սուրբ Հովհաննես եկեղեցու շինարարությանը անհատույց տրամադրելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. ապրիլի 17

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ապրիլի 2018 թվականի N 37

2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 17-ԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՒՄ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՌՈՄԻԿ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2011 թվականի դեկտեմբերի 16-ի N 36-Ն որոշումը, ինչպես նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման գործընթացը կազմակերպող աճուրդային հանձնաժողովի կողմից 2018 թվականի ապրիլի 17-ին կայացած աճուրդի արդյունքները՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի ապրիլի 17-ին կայացած աճուրդ-վաճառքում հաղթող ճանաչված Ռոմիկ Վաղարշակի Աթաբեկյանի հետ 0045-0010 ծածկագրի 0.08 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ կնքել առուվաճառքի պայմանագիր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թ. ապրիլի 17

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2018 թվականի N 38

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տեղամասային կենտրոն սահմանել «Նոր Արտամետի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը (հասցեն՝ 1-ին փողոց 3-րդ փակուղի N 5):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնուն ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թ. ապրիլի 18

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ապրիլի 2018 թվականի N 39

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. 2018 թվականի հունիսի 10-ին նշանակված Նոր Արտամետ համայնքի ավագանու անդամների հերթական ընտրություններում Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղը՝
   1) 2 փողոց 1 նրբանցք 3 շենք՝ 5 քմ:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Խոսրով Ավագյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2018 թ. ապրիլի 18

գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ապրիլի 2018 թվականի N 40

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Վարանցով Գրիգորյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Նոր Արտամետ համայնքի 2 փողոց 1 նրբանցք թիվ 5 հասցեում գտնվող 0.0274 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման, այլ հողերի հողամասում (ծածկագիր՝ 0018-0020, վկայական N 07122017-07-0041) բնակելի տան վերակառուցման շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Վարանցով Գրիգորյանին.
   1) շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինական պետական կոմիտեին՝ համաձայն N 2-5 ձևի.
   2) մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2018 թ. ապրիլի 20
գ. Նոր Արտամետ